

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման չափանիշները

10-րդ դասարան

1-ին հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 1 միավոր,
4-րդ՝ 4 միավոր (2-2):

2-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 1,5 միավոր, 4-րդ՝ 1 միավոր:

3-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 2 միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 1 միավոր:

4-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ՝ 1,5 միավոր, 3-րդ՝ 1 միավոր, 4-րդ՝ 2 միավոր:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի պատասխաններ

10-րդ դասարան

1. Առակը բանահյուսական, ապա և գրական հնագույն տեսակներից է, որը հայ Իրականության մեջ հայտնի է եղել դեռևս մեր առաջին մատենագիրներին: 5-րդ դարի հեղինակները գիտեին Եզոպոսի առակները, որն ապրել է Ք. Ա. 6-րդ դարում և համարվում է առակագրության հայրը: Այդ առակները հայերեն թարգմանվել են 7-րդ դարում: Հայ իրականության մեջ առակը նախապես զարգացել է բանահյուսության մեջ և գրական ժանր է դարձել 12-13-րդ դարերում: Վկայություններ կան, որ առակագիտությունը որպես առանձին դասընթաց՝ առասպելավարժություն, ուսուցանվել է հոգևոր դպրոցներում: Ապագա քարոզիչները ուսումնասիրում էին առակ գրելու և մեկնաբանելու արվեստը, որը նպաստում էր նրանց ճառերի ճարտասանական հմտությունների զարգացմանը: Առակ անվանումը միջնադարում նշանակել է նաև հանելուկ (Շնորհալի):

Առակ բառն ստուգաբանվում է՝ առ ակն՝ աչքի առաջ, աչքի տեսած. Աչքի առած կատարվածը մարդը վերածել է փոքրիկ սրամիտ պատմության՝ բարոյախրատական վերջաբանով: Միջնադարյան առակը արձակ շարադրանքով (հետագա դարերում գրվել են նաև չափածո. Խնկո Ապեր, Ավ. Իսահակյան, Մկրտիչ Կորյուն, Հովհ, Շիրազ և այլք), գեղարվեստական հորինվածքով, բարոյախրատական բովանդակությամբ փոքրածավալ ստեղագործություն է, որտեղ իրականությունը պատկերվում է այլաբանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի, առարկաների միջոցով: Հաճախ ունենում է նաև բարոյախոսական եզրակացություն:

12-րդ դարից սկսած՝ աշխարհականանում է գրականությունը և ժողովրդական բանահյուսության որոշ տեսակներ դառնում են գրական ժանրեր, այդ թվում՝ նաև առակը: Հայ առակագրության նշանավոր առակագիրներն են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին (XII-XIII դարեր):

Առաջին առակի հեղինակը Մխիթար Գոշն է, որն ապրել է մինչև 1213 թվականը: Նրա մարմինն ամփոփված է Նոր Գետիկ (Գոշավանք), վանքի բարձունքում՝ խաչքար մահարձանով: Նրան մեծարել են «այր իմաստուն», «մեծ վարդապետ», «հռաչակվորն և մեծիմաստն գիտությամբ»:

Ավանդություններում ներկայացված է սրբի լուսապսակով:

Առակի բարոյախրատական դասը հեգնական է՝ որքան տգետ ու դատարկ, այնքան պատշաճ վերններին:

Երկրորդ առակի հեղինակը Վարդան Այգեկցին է, որն ապրել է 1150-1230-ական թվականներին Կիլիկիայում: Մասնակցել է Կիլիկիայի արքա Լևոն Բ-ի թագադրությանը: Եղել է շրջիկ քարոզիչ Ամիդում և Տլուքում: Հիմք է դրել առակավոր ճառի տեսակին: Նա հիմնադիրն է հայ գեղարվեստական

արձակի այնպիսի տարատեսակների, ինչպիսիք են սրամիտ գրույցը, մանրապատումը, մանրավեպն ու նորավեպը: Կազմել է «Արմատ հավատո» ժողովածուն:

Առակը դատապարտում է ազախությունը, ցույց է տալիս իշխողների բռնապետությունը, հպատակներին արհամարհելու ու ոչնչացնելու լկտի պահվածքը և տեսածից դաս քաղող խորամանկների «իմաստությունը»:

Այգեկցին մշտապես պաշտպանել է ազնիվին ու թույլին, կանգնել է արդարության պաշտպանության դիրքերում, ծաղրել է հոռի բարքերը, քննադատում է ուրիշի հաշվին ապրողներին:

2. Հայ հին բանահյուսության գոհարները ստեղծվել են անհիշելի ժամանակներում, երգվել ու պատմվել են բանավոր, անցել են դարերի հոլովույթով և հասել մինչև նոր ժամանակներ: Այդ երգերի նմուշները գրի են առնվել տարբեր ժամանակներում, տարբեր երախտավորների կողմից: Սակայն բոլորի մեջ և բոլորից առաջ մենք երախտապարտ ենք Քերթոդահայր Մովսես Խորենացուն, ում տքնաջան աշխատանքի շնորհիվ մոռացությունից փրկվել ու մեզ է հասել մեր ժողովրդի հանճարի անզուգական առասպելների ու վիպերգերի մի փոքր մասը միայն: Սակայն այս փոքրաթիվ նմուշների փրկությունն արդեն իսկ բանալի է ճանաչելու մեզ ու մեր պատմությունը: Հետագա դարերի այլ մատենագիրներ ու բանահավաքներ մեծապես օգտվել են Պատմահոր մատյանից: Մովսես Խորենացին առաջինն էր, որ հավաքեց ու գրի առավ մեր բանավոր գրույցները՝ նշելով աղբյուրները:

Առասպելները գրույցներ են բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին(մեր ժողովրդի երևակայությունը ստեղծել է հարուստ դիցարան, որը ավելի հին է, քան հունականը), որոնք մարմնավորում են բնության ուժերը: Մեր ժողովուրդը իր աստվածներին մարմնավորել է բնության երևույթներում, նրանց նվիրված տոներ է հորինել, խաղեր ու մրցումներ է կազմակերպել, գոհեր մատուցել ու անհունորեն հավատացել նրանց գերբնական ուժին: Առասպելներից մեզ է հասել «Վահագնի ծնունդը» հրաշք երգ- բանաստեղծությունը:

Վիպերգերը առասպելախառն պատմություններ են, որոնց հիմքում ընկած են պատմական անցքեր, իրողություններ: Առաջին վիպերգը, որով հայ ժողովուրդը ճանաչում է իրեն, իմանում իր ծագման, իր հայրենիքի կազմավորման մասին «Հայկ և Բել» վիպերգն է, որի վիպական արմատները հասնում են աստվածաշնչյան աշտարակաշինության ամբարիշտ խորհրդին, երբ աստվածների ցասումից կործանվում է դեռևս անավարտ աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տրվում մյուսներին անհասկանալի լեզուներ: Ահա այս ժամանակներում էլ ձևավորվում է հայ ժողովրդի ծնունդն ազդարարող հրաշալի վիպերգը՝ «Հայկ և Բելը»: Տարալեզու մարդկանց մեջ շփոթություն է ընկնում. նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր իշխել մյուսներին: Տիտանյան Բելին հաջողվում է բռնակալ մյուսների վրա, ստիպում հարկատու դառնալ իրեն, պաշտել և գոհեր մատուցել իր պատկերի առաջ: Սակայն հսկաներից մեկը՝ Հաբեթոսյան Հայկը՝ Թորգոմի տղան, անվանի և քաջ նախարարը՝ հաստ աղեղով և հզոր նետաձիգ, խրոխտանալով ըմբոստանում է բռնակալ Բելի դեմ և չվում գնում է Արարադի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով, թոռներով, որ գորավոր մարիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի և ուրիշ ընդոժիներով, գնում բնակվում է մի լեռան ստորոտում՝ դաշտավայր տեղում շինում է բնակության տուն և այն թողնելով Կադմոսին՝ Արամանյակի որդուն, ինքը գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այն կոչում Հարք, շինում է մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն: Հայկի հետ Հարք են գալիս Թորգոմի յոթ որդիները՝ քաջարի ու անվանի հսկաներ, և ուրիշ ոչ ոք չի հավասարվել երբեք՝ ոչ ջրհեղեղից առաջ և ոչ էլ հետո, ո՛չ հասակով և ո՛չ էլ ուժով ու հերոսությամբ: Նա, դիմելով իր շուրջը համախմբված ժողովրդին, ասում է. «Աստվածների աստվածը՝ բարձրագույն արախչը, տվել է մեզ հզոր ուժ և ժողովրդի բազմություն: Այժմ նրա օգնությանը մենք չպետք է Բելի ստրուկը լինենք»: Հավաքվածները հավանություն են տալիս նրա խոսքին և երդվում աստվածների անունով՝ երբեք չհնազանդվել բռնակալին:

Այս մասին իմանալով՝ Տիտանյան Բելը իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է Հայկի մոտ՝ ասելով.«Դու ցուրտ սառնամանիքի մեջ բնակվեցիրը , սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով՝ խաղաղ ապրի՛ր՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»: Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում խստությամբ պատասխանելով:

«Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ մեջ, դիմադրող այն բոլորին,որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա և ձգտում ստրկացնել նրանց»: Նա իր շուրջը հավաքվածների և իր աղխի հետ պատերազմում է բռնակալի դեմ և հաղթում ու հաստատում իր անկախությունը՝ որդեգրելով հետագայում հայ ժողովրդի ապրելու իրավունքը հաստատող բանաձևը՝ Մահ կամ ազատություն:

Նրա կերպարին անդրադարձել են շատերը. Միսաք Հովենց«Հայկ նահապետը» դրաման, Արսեն Բագրատունի«Հայկ դյուցազուն» պոեմը, Լևոն Միրիջանյան «Հայկյաններ», Ղևոնդ Ալիշան,Միլվա Կապուտիկյան «Խոսք իմ որդուն», բազմաթիվ բանաստեղծություններ, պատմական ուսումնասիրություններ:

Հայկ Նահապետի անունով կոչվել է Օրին համաստեղությունը, ըստ Շիրակացու նա մեր առաջին տոմարադիրն է, նրա ուսուցիչի և դուստրի անուններով կոչվել են հին հայկական ամսանունները, նա մեր ժողովրդի անվանադիր նախնին է, նրա անունով մեր երկիրը կոչվեց Հայք- Հայաստան, իսկ մեր ժողովուրդը՝ հայ, նրան էին նվիրված Նավասարդյան տոները: Հայկ Նահապետի արձանը քանդակել է Կարլեն Նուրիջանյանը. Այն տեղադրված է Նորքի 1-ին զազվածի բարձունքում:

3.Հայ իրականության մեջ վերածնության սաղմերը նշմարվում են դեռևս 9-րդ դարասկզբին, երբ արդյունքում արդեն ուրվագծում էր Հայաստանի պետականության վերականգնումը: 10-րդ դարում, Բագրատունիների թագավորության հաստատումով, թափ առավ քաղաքաշինությունը (Անի,Խլաթ), ծաղկեցին արհեստները, ձևավորվեց և ավարտին հասավ հայ ժողովրդական էպոսը, Նարեկացու հանճարով փայլատակեց բանաստեղծությունը, աննախադեպ զարգացում ապրեցին մանրանկարչությունը, եկեղեցաշինությունը(Աղթամար, Տաթև), Թոնդրակյան շարժումը նախագծեց մարդու իրավունքների հաստատումը, կյանք առան մարդասիրական գաղափարներ:Նարեկացին իր հանճարեղ պոեմում շոշափել է համամարդկային գաղափարներ, ջանացել է մարդուն վերադարձնել իր ազատության, ինքնուրույն մտածելու կարողության, բնությունը ճանաչելու և նրանով ապրելու իրավունքը: Նարեկացին գրեթե երեք դարով կանխել է Արևմուտքի վերածնունդը: Նա համարձակորեն մարդուն բնակեցրել է Աստծու մեջ և Աստծուն՝ մարդու մեջ, մարդուն մղելով ինքնամաքրության:Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը շաղախված է մարդասիրության, կենսասիրությամբ, լույսով, զղջումով,այն համայն մարդկության հոգու և սրտի երգն է:

««Մատյանը »մեր բանաստեղծության Աղթամարա վանքն է՝ լույս այն զանազանությամբ,որ «Մատյանն»անկործանելի է ստուգապես»: Պարույր Մևակ:

Շրջասույթներ՝ մեծ աղոթասաց, մեծ մարդախույզ, մեծ աստվածախույզ, մեծ տառապյալ,Աստծո խոսնակ.....

4. Միջնադարի վերջին հանճարեղ աշուղ- բանաստեղծ Մայաթ – Նովան հայ հանճարի ամենավսեմ փայլատակումն է, ով աշխարհին նայել է իր պատուհանից ու տեսել մարդուն վեհացնող ու ապրեցնող ճշմարիտ սիրո տառապանքը, տեսել ու զգացել է «նաչար» մարդու լուռ հնազանդությունը, «բեզարիլ» է «վաղերումեն ու աղերումեն», պատգամել է՝ «գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե», հանդգնորեն արքայի երեսին է շարտել՝ «խիլքդ հիմարին բար մի՛ անի», հագել է կրոնավորի փարաջա ու երգել սեր ու արդարություն, արժանապատիվ կեցվածք ու պատրաստ՝ չար աշխարհի մեջ դիմագրավելու իր հավատի, իր գաղափարի, իր պաշտամունքի համար: «Աշուղների պոեզիան մինչ այդ անհասանելի բարձրության հասցնող երգիչը Մայաթ- Նովան էր: Նա իր հանճարի գործությամբ ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման»՝ ստեղծելով «մեծ Բեզարածի», «մեծ Ըղձավորի», «Խալխի նոքարի» իր աշխարհը, որտեղ բնակվում է համայն աշխարհի մարդկությունը:

Հանճարեղ բանաստեղծի առաջին կենսագիրն ու «Դավթարի» հրատարակիչը մեծ երախտավոր Գևորգ Ախվերդյանն է:

«Մայաթ- Նովան ազգային է Գողթան երգիչների չափ»: Պարույր Սևակ

Խաղով եկավ, Ախով գնաց Մայաթ- Նովան, Երգով եկավ, Վերքով գնաց Մայաթ- Նովան:

Միրով եկավ, սրով գնաց Մայաթ- Նովան. Միրով մնաց Մայաթ- Նովան... Հովհ. Թումանյան

Ա՛խ, թե գայիր, քեզ կտայինք փառքի հագար դարեր վրան՝ Մասիս սարը՝ քեզ քամանչա,

Ջյունը՝ սաղափ քարեր վրան. Ոսկի Արագ, արծաթ Ջանգու՝ միշտ հայախոս լարել վրան,

Դու դարդիման իմ հայ սրտով, Կովկասի յար, Մայաթ- Նովա..... Հովհ. Շիրազ

Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,

Քեզ միայն քո յարն է վառել, քանի՜ յարեր վառել ես դու..... Եղիշե Չարենց

.....Չի մեռնի այն ժողովուրդը, որ քեզ նման սիրել գիտի..... Միլվա Կապուտիկյան

Իր քնարով նա մեզ ներշնչում է՝ աղքատ սիրել, գիր սիրել: Նա մեր մթնոլորտն է, մեր սերը, մեզ ուրախություն ու թախիծ տվողը... Մեզ հետ է միշտ մեր ուրախության ու վշտի պահեին:

Ավետիք Բսահակյան